

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարկիսի	12 ֆր.
վեցամսեայ	7 "
Արսասահմանի	
համար սարկիսի	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	
սարկիսի	3 ց.
վեցամսեայ	1.50 "

Իրանացի սոցիալիստները 40 սանթիմ իսկ վերջին երեւոյն համար 20 սանթիմ է, երեւոյն աւելի անգամներու համար 20 0/0 զեղը կը դրայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ է

# ՉԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ գրամ զի կը խմբագրուի անս հասցեիս

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տրուի

ՇԱՐԺՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ Ե ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿՍՈՒՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ. ԽՈՒՆՈՐԵԱԼ ՍՕՅԻՍ ԲՍՂԱՔԻ ՎԻՃԱ. ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՍՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափաքողները կրնան իրեն դիմել Չար-Պօրիս փողոց Վառնա

## ՄՕՏԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԻԻ Ա Պ Ա Գ Ա Ն

Փետր. 23-ին ի պատիւ ձէյմս Պրայսի տրուած հացկերոյթին մէջ, իրեն ուղղուած կենացնեւորուն ի պատասխան, ազատական նախարարը բանաստեղծութիւն մը ըրած է, որուն համառօտութիւնը թարգմանաբար կը գնենք. Ուշագրութեան արժանի են իր յայտնած յստակ դատողութիւնները գիւտնագիտութեան կատարած և կատարելիք գերին և մեր երկրին վերապահուած ապագային մասին: Լաւ կը լայ որ ումէն հայու մտքին մէջ անջնջելիօրէն տպաւորուին ասոնք:

«Իսանըհինգ տարի առաջ, Սեւ ծովու եզերքները կատարած ճամբորդութենէս վերջն էր, որ սկսայ, առաջին անգամ, հետաքրքրուի Արեւելեան հարցով:

Այդ ժամանակէն ի վեր կը ցաւիմ որ ուրիշ բան չի կը ցայ ընել, բայց եթէ վառ պահել ճըրագը ու իմ Անգլիացի բարեկամներուս յիշեցնել արեւելեան ժողովուրդներու տառապագին վիճակը և Մեծն Բրիտանիոյ վրայ ծանրացող պարտականութիւնը, անոնց օգնելու և տառապանքներուն վերջ տալու համար:

Այս առաջին յիշողութիւնները 1848—49 թուականներէն կը սկսին, այն փառաւոր տարիներէն, երբ Սերոպայի ժողովուրդները իրենց միապետներուն դէմ կը զինվզէին, և երբ, վարկեան մը,

այնպէս կարծուեցաւ թէ ամբողջ Եւրոպան պիտի վերակազմուէր ազգայնական և սահմանադրական սկզբունքի հիման վրայ:

Իտալիան ու Հունգարիան իրենց ազատութիւնը ձեռք կը ձգէին. Ֆրանսան հանրապետութիւն կը լլար, Գերմանիան իր ազգային միութիւնը ի կատար կ'ածէր:

Ապա, ազատութեան ծառայելու փափաքող անձերու մտածումը Արեւելքի վրայ գարձաւ, և 1876 էն սկսեալ անոնց աչքերը ուղղուեցան Պուլկարիոյ և Հայաստանի, Մակեդոնիոյ և Կրէտէի վրայ: Իժուարին էր հասարակաց կարծիքը հետաքրքրել այս երկիրներու, թէեւ անոնց կրօն տառապանքները շատ սւելի վայրագ ու անարկու էին ու իրենց պայմանները շատ աւելի յուսահատական քան Իտալիոյ և Հունգարիոյ:

Եւ սակայն, Արեւմուտքի մարդիկը, իրենց գործունեայ ու բարգաւաճ կեանքին մէջ, Արեւելքի երկիրներու յուսահատեցուցիչ վիճակին վրայ կը խօսէին և Անգլիոյ կը յիշեցնէին իր վրայ ծանրացող պատասխան տուութիւնը:

«Իժուարագար, շարիքը ըլլալէն ետքը բուժելը դժուար էր, ու Անգլիան չէր կրնար խուսափիլ այն շարիքին հետեւանքներէն զոր պատճառած էր այս ժողովուրդներուն անոնց դժբաղդութիւնը երկարելով:

«Չի կարծուի թէ Արեւելքի ժողովուրդներուն համար մեր ընել ու զածը միւլիմաններուն գէշ ու քրիստոնեաներուն նպաստաւոր բան մը փնտռել է: Ետեւերը կը կարծեն թէ մենք կուզենք բռնալ հարստահարութիւններն և հեռացնել անարգարութիւնն ու վայրագութիւնները ուր որ անոնց հանդիպինք: Մենք այսքան աններգաշնակ բազմանքներ չունինք: Մեր իշխանութիւնը ստիճանափակ է: Մենք գիտենք որ շատ դժուարին պարտականութիւններ ունինք

կատարելիք մեր երկրին մէջ: Մենք գիտենք որ պարտաւոր ենք նախ բարելաւել մեր ժողովուրդին տանջուող մասին վիճակը: Մենք գիտենք որ չենք կարող մեր «բէյֆաին» ուղած ընել: Այսուհանդերձ կընդունինք թէ շատ բան կրնանք ընել և պարտաւոր ենք մեր ձեռքէն եկածը չի խնայել աշխարհի վրայ համակրութիւն վաստակելու համար:

«Պէտք չէ յիմարաբար կարծել թէ մեծ ազգի մը պարտականութիւնը կը կայանայ բուն իսկ իր անպատեհներուն պաշտպանութեան մէջ միայն:

«Յստեակ խնդիրներու մէջ մեծ ազգի մը կառավարութիւնը իր երկրին հասարակաց կարծիքէն առաջ անցնելու չէ, եթէ ազգը կուզէ, կառավարութիւնը կրնայ իր ազգեցութիւնը ի գործ դնել ի նպատակ մարդկութեան և արդարութեան: Անգլիական, Ֆրանսական և Իտալական ազգերը կը փափային որ իրենց կառավարութիւնները այս ճամբան բռնեն: Մէկ քանի տարիներէ ի վեր ասոր հակառակ նշաններ չեն նշմարուիր այդ ազգերուն մէջ: Խորհրդարանին երկու կուսակցութիւններն ալ այս կէտին վրայ տարակարծիք չեն իրարու: Եւ մեր ժողովրդին ծանօթ ամէն մարդ գիտէ թէ, իր նշափառութեամբ հանդերձ, այսօր ան պատրաստ է աջակցիլ իր կառավարութեան Արեւելքի ընկճուած ժողովուրդներուն վիճակը բարելաւելու նպատակաւ ընելիք բոլոր քայլերուն:

«Մեծ ազգ մը պէտք չէ աշխարհի մէջ իր ունեցած ուժն ու ազգեցութիւնը և իր վայելած ազատութիւնը նկատել լոկ իրեն շահու աղբիւր մը, այլ, իբր պահեստ մը իր ձեռքերուն մէջ՝ բոլոր մարդկութեան շահուն ի նըպաստ: Պէտք է այսպէս մտածել մանաւանդ Արեւելքի ժողովուրդներուն համար, երբ անոնց վիճակը ապահովելու օրը գայ: Այն ժամանակ այդ երկիրները կազ-

մակերպելու երկու կարելի ձեւ կայ միայն: Կամ այն է որ եւրոպական մեծ տէրութիւն մը զայն իր պաշտպանութեան տակ պիտի առնէ ու իրեն պիտի կցէ, և կամ ներքնապէս զարգանալով՝ անկախ ազգութիւններ պիտի կազմեն:

«Անտարակոյս, ամէնքս կը բազմանք որ այս պտղատու ու արգասաբեր երկիրները իրենց բնիկ ժողովուրդներուն ձեռքը մնան, որոնք իրենց զարգացումով ու իրենց աւանդական հաւատքը պահելու մէջ ցոյց տուած յարատեւութեամբ հասկցուցին թէ ունին աշխարհի մէջ ուժ մը ներկայացնելու չափ տոկունութիւն և կենսունակութիւն:

«Ասիկայ պիտի ըլլար բազմալի լուծումը այնքան դժբաղդութեանց դարերէ ետքը, ու միանգամայն պատիւ մը, փառք մը Անգլիոյ, Իտալիոյ և Ֆրանսայի պէս ազատամիտ ժողովուրդներուն, եթէ կարողանան աջակցիլ այս գործին:

ձԷՏՍՍ ՊՐԱՅՍ

ՍԼԱՑԻԿ ՆՕԹԵՐ

## ԼՕՆՏՕՆԻ ՀԱՅԵՐԸ

Ա.

Ինչպէս որ երկու քաղաքները— Բարիզ և Լոնտօն.— երկու հզօր հակապակերներ կը կազմեն իրարու՝ իրենց տեսքով, կեանքով և դիրքերով, նոյնքան ալ անբաղդատելիօրէն մեծ տարբերութիւն կայ այս երկու մայրաքաղաքներու հայ գաղութներուն մէջ:

Բարիզի հայութիւնը, իր թերթերով և թերթերուն քառապատիկ խմբագիրներով, ինչպէս եւ ուսանողներով եւ շնչերու փաղաքով, ու է՛ն գլխաւորը չը մոռնանք յիշել, իր ժան-կուժօնի չէնքով, կը կազմէ վերջապէս հիւլէ մը Բարիզի միջազային խառնիճաղանճին մէջ, քանի որ, կը վստահեցնեն թէ առ նուազն 1500—2000 հայեր կը գտնուին հոն: Բազմին երկուքուկէս միլիոնին մէջ գոնէ կոտորակ մը ունի...

Բայց ի՞նչ կըսէք Լոնտօնի հայութեան, ի՞նչ կոտորակ կուտայ անոնց

250-300 ին՝ ամբողջ վեցուկէս միւր-  
ոննոց չըջապատի մը մէջ, գաւառա-  
նման ընդարձակութիւնով օժտուած  
այդ հսկայ մետրոպօլիտին մէջ տար-  
տըղնուած...

Հոն ո՛չ խմբագիրներ կան եւ ո՛չ  
ալ ուսանողներ, և, հետեւաբար, կար-  
ծեմ գաղութը առաւել երջանիկ պայ-  
մաններու ներքեւ կը գտնուի: Բո-  
լորն ալ աշխատաւոր են, մեծ ու  
պզտիկ— Այր ու կին եւս պիտի ա-  
ւելցնէի, սակայն, մէկէն յիշեցի որ  
Լօնտօն հայ իգական սեռը է՛ն հազ-  
ուազիւտ բանն է — (թերեւս այն նա-  
խախնամական գուգայրպութեամբ՝  
որ տեղականն ալ է՛ն առաւելն է, —  
մէկ արուին դէմ երեք է՛գ, ըստ պաշ-  
տօնական վիճակագրութեան): Զիս  
չափազանցող մը չը պիտի նկատեն  
անշուշտ Լօնտօնցիք, երբ համարձա-  
կիմ ըսել որ ձեռացող մասները շատ  
են արդէն այդ հայ իգական սեռէն  
գտնելու համար Ալպիօնի մայրաքա-  
ղաքին մէջ, չը հաշուելով, անտարա-  
կոյն նորաստեղծ, տէ օ՛ն մէ հայու-  
հիները:— Ծօն Պուլի հարազատ թոռ-  
նուհիներէն—որոնցմէ մէկ—երկու  
տասնեակ մը կրնամ թուել ձեզ:

Որքան հայ կայ Լօնտօն քացի չո-  
ղերէ եւ սասնակ մը գրագիրներէ,  
գրեթէ իւրաքանչիւրը առանձին ար-  
հեստով մը կը գրադի եւ կարելի է ը-  
սել որ ամէնքն ալ լաւ ազդեցութիւն  
թողած են անգլիացի բժախնդիր  
բաղրօններուն և դժուարահաճ Փօր-  
մէննեթուս վրայ: Խոշոր տպա-  
րանի մը մէջ իր ճարտարութիւնով  
և արագութեամբով տեղացիներուն հետ  
մրցումի ինկած գրաչարէն մինչեւ  
«թոռայիբըրով» (եռոտանի հեծանիւ  
մը) տուններն ու խանութները հաց  
պատեցողներ կան հոն: Ազնիւ հայ  
մը, Պ. Աթաբեկ, Լօնտօնէն քիչ  
հեռու Բէյնօքթաուն կոչուած տեղը  
ուրի վառօթի գործարան մը որ իրեն  
գիտող հայերը յաճախ կը հիւրընկա-  
լէ և աշխատաւորներուն մեծամաս-  
նութիւնը բաղկացած է հայերէ:

Ինչպէս որ Բարիզեան դրոշմը կը  
նկատուի Բարիզի գաղութին վրայ,  
միեւնոյն պարագան է նաեւ Լօնտօնի  
հայերուն համար: Երջապատ, միջա-  
վայր, տեղական բարքեր մեծապէս  
նկատուի են Լօնտօնցի հայերուն  
վրայ: Բաղդատաբար լուրջ են եւ,  
աւելի պիտի յիշուի մարդ մը ըլլա-  
լու հոգով տառապող քան Տօն  
Ժուան մը հանգիստանալու երազներով  
թուշող:

Միջավայրի ազդեցութեան ապա-

ցոյց մը տալու համար՝ ըսեմ հետեւ-  
եալը:— Որքան որ Բարիզցի հայ ե-  
րիտասարդները ունին ամուսնախոյս  
բնաւորութիւն, նոյնքան ալ Լօն-  
տօնի հայ երիտասարդները ունին ա-  
մուսնանալու տարօրինակ ձգտում եւ  
տենջ մը, որուն իբրեւ վկայութիւն  
կրնամ բերել անգլիացի ազդիկներու  
հետ ամուսնացածներու կոկիկ թիւ  
մը: Հոս ո՛չ մէկը կը նախատեմ եւ  
ո՛չ միւսը կը գովեմ. սա շատ փա-  
փուկ նիւթ մը ըլլալով, իմ սեփհա-  
կան կարծիքս կը պահեմ ինծի՝ «Շար-  
ժում»ի գլխուն փորձանք մը չը բե-  
րելու համար: Ինչպէս ըսի, տեղական  
բարքերու ներգործման ապացոյցը  
տալու համար է միայն:

Լօնտօնի կեանքը ինքնին գուրկ է  
Բարիզեան նշանակութիւնով եւ դե-  
րով քաֆէներէ. անոնց առջին ու ե-  
տին երկարող դէրասներէ, անհատ-  
նում պարահանդէսներէ քաֆէ-նում  
գահանդէսներէ եւ այլ Բարիզը յատ-  
կանող շէնքերէ ու գուարճավայրիէ  
ուր դրամ ու երիտասարդութիւն կը  
զոհուին եւ միեւնոյն ժամանակ ամէն  
կարգի հաճոյքներ կը վայելուին:  
Հետեւաբար, երբ Լօնտօնցի հայը  
վերադառնայ գործէն, պարտաւոր-  
ուած է մէկուսանալ խցիկը եւ մտաւո-  
փոփ աշխատել, եթէ նիւթական մի-  
ջոցները պայմանադրելի են. կրնայ  
անգլիացի բարեմիտ Լէյտի մը յար-  
կին տակ ընտանեկան քաղցրու-  
թիւններն ալ վայելել, մասնաւորա-  
պէս արուարձաններուն մէջ: Իսկ ե-  
թէ ամառային գեղածիժող օրերն  
մէկը Հայտ բարք եւ նաճանաւազ  
ատոր նուագախմբին շուրջը, միջազ-  
գային խաժամուածին մէջ դեզերած  
պահուն, հանդիպած է կուպիտօնի  
սլաքներէն մէկուն, այն տեսն շա-  
քաթը քանի մը գիշեր ափ կառնէ  
սուրի գհարգին դուրը՝ էնոր օտ-  
տարական՝ երիտասարդներուն ազ-  
նուութեան, բարութեան եւ քաղց-  
րահամայր բնաւորութեան վրայ  
հազներգած պերճարանութիւնները  
ունկնդրելու արբիտ—առանց իսկա-  
պէս հաւատալու պայմանով—եւ այ-  
նուհետեւ շաքարավաճառին խանու-  
թը արշաւելու: Որովհետեւ, փակա-  
գծի մէջ ըսնք՝ որ շաքարն ու շա-  
քարեղէնը Ալպիօնի ազդիկներէն ա-  
ւելի գիշերք պաշտօններ շուրին եւ  
երբ բնագիտական դասին մէջ լսէք  
որ Անգլիա ամենէ շատ շաքար սպա-  
տող երկիրն է, գիտցած եղիք որ  
սպառողները իրական սեռին կը  
պատկանին առհասարակ: Մ. Յոյակ

ԷՏԿԸՐ ՈՒՕԼՍ.

ՎԱՐՍԻՐ ԷԶԵՐ  
ՑԱՐԻԶՄԵՆ

ՊԵՏՐՈՍԷՆ ՎԵՐՋ

Կը պատմուին իր մասին այնպիսի  
պատմութիւններ՝ զորս անհրատարա-  
կելի են, սակայն բաւական է ըսել  
որ գազան մէջ: Շատ զժբախտ  
փորձառութիւն մը ունենալ սահման-  
ուած էր, որովհետեւ երբ Աննա մե-  
նու, կարգեց իր քեռորդին իվան  
գահակը՝ գիբուկ, տխմար, ուսածերես  
զարման իշխանուհիի մը և իր ո՛չ  
նուազ գիրուկ, տխմար ու կապու-  
տաչուի ամուսնոյն:

Իվան, որդին, Յար հոչակուեցաւ.  
Պիրէն կարգուեցաւ խնամակալ: Ա-

ԲԺԻՇԿ ՎԱՀԱՆ  
ԳՈՒԹՈՒՄԾԵՆ

Երէկ երեկոյ, սրտի անխառն  
հաճոյքով և ազգային անկեղծ  
հպարտութեամբ մը ներկայ ե-  
ղանք, տեղւոյս պուլկարական  
հիմնադրոնի ընդարձակ սրա-  
հին մէջ սաքուած հաւաքումին,  
ուր, կիմնադրատներու խմբական  
ներգաշնակ նուագէն ետք, իր  
հրապարակային օգտաշատ առող-  
ջապահական դասախօսութիւնը  
արտասանեց յարգելի Տօքթօրը:  
Թօքթախտի մաշիչ հիւանդութեան  
և իր ենթակային խնամք տանե-  
լու, գիտական անհրաժեշտ մի-  
ջոցներու վրայ, երեք քառօրգ  
ժամէն աւելի, համոզիչ և շինիչ  
փաստերով իրատեսախօսութիւնը  
շարունակելով, շատ պարզ ու մէ-  
կին կերպով եզրակացուց իր գի-  
տական խրատները, ներկայ ե-  
ղող ունկնդիրներու մոքին տը-  
պաւորելով զանոնք. համ. կրա-  
կան բուռն ծափահարութիւններ  
խլեց ամենքէն աչնիւ Տօք-  
թօրը:

Անցեալ 1904—905 դպրոցա-  
կան տարեշրջանի սկիզբները,  
երբ Պուլկարիոյ կրթական նա-  
խարարութեան կարգադրութիւ-  
նով սիրելի Տօքթօրը Միլիտ-  
րէի քաղաքային բարձրագոյն  
Մանկավարժական կիմնադրային  
առողջաբանական և գիտական  
բրօքէսօր և վերահսկող նշանա-  
կուեցաւ, իր ներկայութիւնը ոչ  
միայն մերայնոց այլեւ օտարազ-  
գի հասարակութեան մեծ բարիք  
և զօրաւոր սփոփանք մը եղաւ  
պէտք տուանկարող դասակար-  
գին: Առանց խտրութեան սի-  
րայօժար կայցելէ ամեն ազգի  
սղբատ հիւանդներուն, իր բը-  
ժշկական պարտականութիւնը ա-  
ռանց փոխարինութեան կատա-  
րելէ ետք, տեղ աւել ալ, իր  
զգալուն սրտի խելագորութեանց  
հետեւանքով, նիւթական օգ-  
նութիւն ալ ընձեռած է զանա-  
զան հիւանդներու ազքատ տէրէ:

Լուծելու կը կազմէին:

Կասկածանքը առիթ կուտայ կաս-  
կածանքի, եւ շուտով փսփուքներ  
սկսան Արքունիքին մէջ, գումարում-  
ներ փոքրիկ տարածեւ սուները,  
միստիքական անցախօսեր և գալիք  
մեծ պատահարներու ամէն կարգի  
նշաններ:

Որովհետեւ Պետրոսի եւ ցոփ կա-  
տարիներ ծնած զաւկներուն մէջ  
կար նաեւ մանուկ մը՝ որ մեծցած  
էր իբրեւ ընտիր ազդիկ մը.— քարձ-  
րահասակ, պերճ ու շնորհալի, գոյտր  
գլուխը զետեղուած հոյակապ ուսե-  
րու վրայ, մագեր թուր ու միտաք-  
սային, աչքերը մութկապոյտ և յոգ-  
նած... բովանդակ մարմինը պատ-  
կերացնելով մէկը՝ նուիրուած հա-  
ճոյքի:

րուն, Գիտնալով մեր սիրելի ազ-  
գակից Տօքթօրի համեստ  
բնաւորութեան հետ անփառասէր  
ընթացքը, այս տողերը հրատա-  
րակելու համեստութեան հակա-  
ռակ վարմունք մը պիտի նկատուի  
սակայն քանի որ խնդիրը հասա-  
րակական օգտին և սերունդնե-  
րու կեանքին հետ կապ ունի,  
անշուշտ կը ներէ մեր այս ան-  
գայտնապահութեան:

Տօք. Գուլումճեան, այս առա-  
ջին անգամ չէ որ հրապարակա-  
յին իր կարեւոր դասախօսու-  
թիւններով, քաղաքիս ամբողջ  
բնակչութեան համակրանքը գը-  
րաւած է: Արդեօր սրբա՛ն օգ-  
տակար պիտի լինէր մի քիչ ա-  
ւելի այցելէր մեր վարժարանը  
տղայոց երբեմն օգտակար խրատ-  
ներ տար, անշուշտ իր հանգստ-  
եան ժամերէն զոհօ լով: Տեղւոյս  
սիրելի հայութեան ալ, իր արե-  
նակից, գիտուն և եռանդոտ բժշկի  
ներկայութեան օգտուելով, հը-  
րաւերէր զինք իր հասկնալի լեզ-  
ուով խօսելու մեզ առողջաբանա-  
կան այն ամենակարեւոր նիւ-  
թերու վրայ, որոնք այնքան սերտ  
կապ ունին մեր հանապազօրեայ  
կեանքի հետ:

Առողջութիւնն ալ ամենէն  
թանկագին գանձն է, ինչպէս  
անհատին: նոյնպէս ալ ազգերու  
ամբողջութեան համար. ուրեմն  
որքան համակրելի է այն ամէն  
միջոց ու ձեռնարկ, որ կեանքի  
այս ամենահարժեշտ պէտքը  
գոյացնելու կը ձգտի: Եւ մենք  
որքան երախտազէտ պէտք է  
լինինք այն գիտուն քայց առն-  
նուէր մշակներու, որ  
կեանքի դաշտէն, թղունաւոր  
միջոցները շնչելու ջանքերը  
չեն խնայեր, երկար թող ապ-  
րին մարդկութեան օգտակար  
հանդիսացող այսպիսի բարերար  
բժիշկները որոնք պարծանք են  
Հայութեան...

27 փետր. 1906  
Սիլիստրէ

համապատասխանէր ժամանակակից  
քանդակի մը, ուր կը տեսնուի ան-  
ուելիօրէն յայն երեսով կին մը, նի-  
հար շրթներով, մեծամարմին ու  
քնատ:

Հաճելի երեցաւ Եղիսաբեթի,  
ինչպէս զկոյս թագուհին: այս կըզ-  
գիններուն (Բրիտանական) և համա-  
նման անուան մը, մնալ մշտնջենապէս  
անամուսին:

Ռուսիոյ Եղիսաբեթի սիրաբ. տա-  
պանին մէջն էր գերման իշխանի մը,  
Հօլլանդացի-հօթիօրը: Կարալուս մեռած  
էր եւ Եղիսաբեթ ուխտեց մնալ շա-  
մուսնացեալ, թէ մնաց էն հաւատա-  
րիմ ուխտին, պատմութիւն է, ալ  
անհատնում սիրահարներ ունէր: Այս  
կնոջ շուրջը բոլորուեցան Արքունի-  
քի դժգոհները: Պետրոսի ազդիկն էր  
ան, և Պետրոս բաւական ատենէ իվեր  
մեռած՝ սիրուելու համար:



խանութի մասին, ըստ թէ ինքնապէս չափ չունէր, այլ քուէ մը միայն եւ իր կարծիքը անոր կածիքին ո՛ր մասին որ համաձայն ըլլար, այն մասին ուշադրութիւն կընծայէր :

(Շարունակելի)

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ամսոյ 18 ին «Ձէրնագա Սքալա» անուն պահակի մօտ, երրորդ սահմանապահ խմբակի հրամանատար Միթովը, պահակները այցելելու կելնէ: Պինանագա Ձուգաի» և «Նանգովա Մակի լա» միջև 10 թուրք զինուորներ, որ մասն էին պուլկարական երկիրը, յանկարծ վրան կը յարձակին: Թէ զինքը և թէ անոր հետեւող պահակազօրը բռնելով «Թալէվ հրասդ» անուն թրքական պահակը կը տանին:

Ճամբու վրայ թուրքերը թէ սպան և թէ զինուորը զինաթափ կընեն, կը նախատեն, կը հայհոյեն և կը սօթեն: Բացի ասկէ կը ձեռն ալ զինուորը:

Պատէվ հրասդ» հասնելով կը ձգեն որ զինուորը ետ դառնայ, իսկ սպան 24 ժամ կը բանտարկեն կապուղտ գիւղին մէջ, ուր իրենց նստատեղին է:

Պուլկարական կառավարութիւնը շատ խիստ ծանուցագիր մը տուած է Բ. Դրան, որով տաճիկ զինուորներու խստիւ պատժուիլը կը պահանջէ: Իսկ զինուորական նախարարութիւնը այնպէս մը տնօրինած է որ՝ եթէ երկրիս իշխանութեան այս շատ իրաւացի պահանջին զոհացում մը չը տրուի, սահմանապահ զինուորներուն, իրենց յարմար տեսած՝ նշանակով վրէժ առնել կարտունուի:

— Ամսանս Հավասաի գործակատար Սանտոսի գաղտնաբերութիւնը Սօֆիայի մէջ տեսնուելով, Սանտոս մէկ տարի բանտարկութեան դատապարտուեցաւ:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ճիշտ չէ այս լուրը, թէ Ահապաի մօտ, Թապաի մէջ թուրքերան 10,000 զինուորունի, ինչպէս նաեւ Բ. Դրան, Անգլիոյ տուած խոստումները մինչեւ այսօր կը մնան անգործադրելի: Թուրքերան զօրք մը իսկ ետ չէ քաշած Թապաին: Թապաի մէջ 400 զինուորէ աւելի չկայ:

— Մարշալ Ֆէյզի բաշան, Սանաի առջեւ, Պէտուին-վահապետներու դէմ բռնու և յուսահատ կելու մը կը մղէ: Նա որպէս ձեռ և յոգնած խնդրած է Եէմէնի բանակի հրամանատարութենէ զինքը ազատ արձակել: Սուլթանը հրամայած է որ իր տեղէն

չը շարժի, և տնօրինած որ իրեն շուտափոյթ օգնութիւն հասցնեն, սակայն կառավարութիւնը արգելքներու կը հանգ պի, զինուորները Եէմէն երթալ չեն ուզեր, բացի ասկէ, զինուորական նախարարութիւնը շուտարած, չը գիտեր թէ ինչպէս լուծէ փոխադրութեան հարցը:

— Պայխաբուզ» լրագրին կիմացնեն թէ՛ Ալպանիոյ մէջ բաւական լուրջ կռիւներ տեղի կունենան, ուր կաղութիւնը շատ փափուկ է: Հազարաւոր Ալպանացիներ, վարտարի վրայ վաչիւրանը պաշարած են: Անոնք, միջազգային ոստիկանութենէ ձերբակալուած Ալպանացի պարզուխներու ազատ արձակուելը կը պահանջեն:

#### Ո Ռ Ի Ս Ի Ա

Պալթիկեան նահանգի մէջ յեզափոխութիւնը կը շարունակուի: Բեթերսպուրկէն «Լոգալ Անցայկէր» լրագրին քաջուած հեռագրի մը համաձայն, շատ մը զինուորուած յեզափոխական զնդեր երեւան եկած են: Միգրուէն 13 վերագ. հեռու, ապստամբական խմբակ մը հաստատութեան մը վրայ յարձակելով, շարք ու փշուր ընելով Յարին պատկերը և դրամարկիին մէջ գտնուած բոլոր դրամները առնելէն վերջը անյայտ եղած է:

Իեթերսպուրկէն զօրք զըրկուած է:

— Բիկաէն կիմացնեն թէ՛ ոստիկանութիւնը՝ տեղւոյն յեզափոխական զօմիթէի՝ արուեստական բաժնին պարագլուխը ձերբակալած է, որու տան մէջ գտնուած է գաղտնի տպարան մը, բազմազան տպագրական պիտոյքներով: Հազարաւոր նամակներ և յայտագրեր յեզափոխական բովանդակութիւնով, որոնք գաւառներու մէջ ցրուելու համար պատրաստուած են հղեր:

— Փետրվար 27 ին Մոսքովայի և Մոսքովայի գաւառին մէջ անգլիուենցած են գործաւորական նախնական ընտրութիւնները կառավարական Տումաի համար: Գործաւորներէն մէկ մասը, մանաւանդ տպագրիչները, գրաշարները, կազմի հաստատութիւններու և թրանվայներու գործաւորները ընտրութիւններու Բասնակցած չեն, սակայն օրը հանդարտ անցած է:

— Վերջին գործադուրը, արգիւնազորութեան տեսակէտով, մէկ միլիարտ ֆրանքի նստած է Ռուսիոյ:

— Իեթերսպուրկի մէջ, փոխառութիւն մը կնքելու համար, հարկ եղած նախնական պատրաստութիւնները կը տեսնեն: Մէնաէլսոն սեղանատան վարիչը, էր-

նէտք Յօն Մէնտէլսոն Պարզալիտի Բեթերսպուրկ կը գտնուի: Փոխառութիւնը կնքուելու է Գերմանիոյ և Ֆրանսայի մէջ, և պիտի յանգի 125 միլիօն բուլղարի, թէև 1 ր կարծուի թէ այս գումարը մէկ մասը միայն կը կազմէ կնքուելիք փոխառութեան: Սակայն շրջաբերութեան հանելու համար, կը սպասեն Սլովէրիտի համաժողովին բարեբաստիկ պայմաններու տակ փակուելը:

#### ՅԲԱՆՍՍ

Ամսոյս 1 ին երեսփոխանութեան նիստի բացման ժամանակ, Սարիէն նորակազմ նախարարութեան նախագահը, կարգաց նախարարական ծրագիրը, Այս ուրուագծին մէջ կը յիշուի թէ՛ կառավարութիւնը, կարելի եղածին չափ կարճ ժամանակամիջոցին մէջ պիտի ջանայ աւարտել եկեղեցական գոյքերու ցանկը, շըրջահայեցողութիւնով և կտրուկ գործելով: Հակազինուորական կռիւը կառավարութիւնը չընդունիր և այս մասին եղած ու է ներում շնորհելու կարծիքէն չէ: Կառավարութիւնը, Բուլղիէ նախարարութեան արտաքին քաղաքականութիւնը պիտի շարունակէ, խաղաղասիրական ոգով ներշնչուած, սակայն պահպանելով Ֆրանսայի իրաւունքը և արժանապատուութիւնը: Կառավարութիւնը ֆրանսոս-առուսական նիւզակակցութեան ոյժ պիտի տայ, նա միանգամայն պիտի պահպանէ Ֆրանսայի հաստատած բարեկամական յարաբերութիւնները:

Կառավարութիւնը որոշած է, Գուրիէրի արկածէն զնստուած ընտանիքներու օգնութեան հասնիլ: Այս սոսկալի դժբախտութեան պատասխանատուութիւնը պիտի հաստատուի, բացի ասկէ աշխատութեան և հանքերու պայմանները բարեփոխելու համար պէտք եղած միջոցները պիտի ուսումնասիրուին:

Երկար ու բարակ ընդգրիմաբանութենէ ետքը 107 ի դէմ 305 ձայնով կառավարութեան ծրագիրը ընդունուեցաւ:

#### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Բայոզակի ամսոյս 4 ին գումարուած նիստին մէջ, Պէպէլ ճառ մը խօսած է, Վիլհէլմ կայսեր մասին, ըսած է թէ՛ կայսրը կը փոփաքի որ զինքը Մահմետական կրօնքի և բոլոր Մահմետականներու պաշտպանը համարեն: Կայսեր Պօլիս, Երուսաղէմ և Մարօք ճանապարհորդելը, չէ եղած ուրիշ նպատակով, բայց միայն համոզելու համար թէ՛ Վիլհէլմ կայսրը Մահմետականութեան կը ծառայէ: Ամբողջ իսլամական աշխարհը կը հաւատայ որ՝ Գերմանական կայսրը, իսլամութեան դրօշը բարձր կը պահէ: Պէն, էրցպէրկ-կղերական-երեսփոխան, կը պատասխանէ Պէպէլին

Մահմետական կրօնքը, գերմանական Աֆրիգաի մէջ կառավարական պաշտօնական կրօնքն է: Ուր յիշուի Վիլհէլմ կայսրը՝ իսլամութեան առաջին պարագլուխը կը համարուի:

#### ՄԱՐՈՔ

Ոստիկանական և պանքի հարցը դեռ ես իր լուծումը ստացած չէ, ֆրանսացիք բնաւ երբէք չեն ընդունիր երրորդ տէրութեան մը սպաներու նշանակումը, որպէս ոստիկանութեան կառավարիչ: գալով պանքի մասին կը պնդեն որ հիմնուելիք Մարթեան կառավարական պանքան ֆրանսականի բնոյթն ունենայ:

### ԹԱՏՐՈՆ

«ԶԱՆԱ ՊՈՒԼԿԱՐՈՒԱ»

Երկրորդ և վերջին ներդաշնակում մը:

Տնօրինութեամբ Տէր և Տիկին Յակոբեաններու «Օրինթալ» թատերախումբը վաղը՝ կիրակի քիչեր պիտի ներկայացնէ—

«Սոցալարեալ Սելապարը» թատերախաղ 2 արար:

Եւ «Գիշեր բարի Պարոն Բանթալօն» ու «Սոցալար Սիւնտոն Բիթրիթ» երկու ծրագրաւոր զաւեշտները:

Յուսալի է որ սոյն վերջին ներկայացումն ալ առաջնոյն չափ համակրութիւն գտնէ յարգոյ թատերասիրաց կողմէ:

#### ՆՈՐ ՀՐՍԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս Ա Ր Ս Ո Ւ Ի Ն Ե Ր

Քնարական Բանաստեղծութիւնք

Երգեց

Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Դ Ա Ն Ի Է Լ

ՎնեճՏԻԿ—Ս. ՂԱԶԱՐ

1906

Փոքրիկ հատորիկ մը մերթ սիրուն երգերով, ինչպէս Հաչի շըր, մոխրի ներուէն առջեւ Վեշշեւ և այլն:

o(—

Լոյս տեսաւ ի Լօնտօն «ՊԱՏԱՆԻ» ամսագրերի տպարանէն:

ՊԱՏԱՆԻԹԻՒՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ. Հեղինակութիւն Բրօք. Թուսայանի: Նիւթին շահեկանութիւնը և հեղինակին հմտութիւնը եւ ոճը մեծ արժէք կուտան այս 670 էջերէ բաղկացեալ և երկու հատորի բաժնուած գրքին: Գինը Պուլկարիոյ համար 4.40 ֆր. փոստով 4.80 ֆր.

ԳՐԱՆԻ ԵՐԿՍՐԱՆ. կը պարունակէ 100 հատ ընտրեալ ազգային երգեր: Գինը Պուլկարիոյ համար 1. րօստով 1.10:

Փափաքողները կրնան գիմել հետեւեալ Հասցէին  
Représantante de la Revue „Badani“ chez M-r Avedis Melidonian — Varna

Bulgarie

Վճարումները պէտք է կանխիկ ըլլան: